

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան դին Կ. Պոլսոյ համար 430 42.  
» Գաւառաց » 460 »  
» Ոտար երկիրներու » 480 »  
» Երկրամասայ Կ. Պոլսոյ » 75 »  
» Գաւառաց » 80 »  
Իւրաքանչիւր թերթի վրէն 60 փր.  
Շաբաթական տողը մէկ անգամի հա-  
մար 2 դուրուշ, երկու անգամի հա-  
մար 60 փարսոյ, աւելի անգամներ-  
ու համար 40 փարսոյ :



Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՒԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՔԱՂԱՒԱԿԱՆ

ՔԱՂԱՒԱԿԱՆ

Ս. Պապը Հռոմ գտնուող Արեւելե-  
եան Կաթոլիկ եպիսկոպոսոց իւր ձեռ-  
քովն եկեղեցական զարդեր բաշխեց,  
որք աղքատ եկեղեցականաց օգնու-  
թեան եւ Ս. Կուսին մշտնջենաւոր  
պաշտաման համար Պէտքիքայի մէջ  
կազմուած ընկերութեան մ'անդամե-  
ղող տիկնանց ձեռագործներն են :  
Նորին Սրբազնութիւնն այս առթիւ  
արեւելեան եպիսկոպոսաց տաճարա-  
խօսութիւն մ'աղղեց, ուր ներկայ  
պարագայից նկատմամբ կարեւոր յայ-  
տարարութիւններ կը գտնուին :

Ահաւասիկ յիշեալ տաճարախօսու-  
թեան գլխաւոր հատածները, ըստ  
Հռոմի պաշտօնական յօդոսարին :

« Ուրախ եմ որ այս տիկնանքը  
մանաւանդ Արեւելեան ծէսերու հա-  
մար յատուկ զարդեր չնկնելու ընթա-  
ղած են : Չեմ գիտեր թէ այս զար-  
դերուն նկարն ու երկայնութիւնն ալ  
այն ծէսերուն յարմար պիտի դա՞ն.  
բայց ամեն մէկերէն հարկաւ պիտի  
ջանայ կարելի եղածին չափ յարմար-  
ցնելը : Ուրախ եմ, կ'ըսեմ մանաւանդ,  
վասնի զի Արեւելեան ծէսերը կը սի-  
րեմ եւ կուզեն որ անփոփոխ պահ-  
ւին : Եւ ծէսերու դանդաղութիւնը կա-  
թոլիկ եկեղեցւոյ միութեան ամենա-  
մեծ զարդերէն ու փառքերէն մէկն  
է . . . իմ բոլոր որդիքս կը սիրեմ,  
առանց ազդի, լեզուի եւ ծիսի խոտ-  
րութեան, եւ եռանդեամբ կը բաղձամ  
որ այս սիրոյս անմեք ապաստանեն,  
եւ այսպէս գլխոյն եւ անդամոց մէջ  
եղած միութիւնն առաւել սերտ եւ  
անձուկ ըլլայ : Իմ խօսքերս մասնաւո-  
րապէս առ ձեզ ուղղուած են, Արե-  
ւելեանք, որոց ըով այս օրերս ջան-  
քեր եղան՝ զձեզ այս Սուրբ—Սթոլուս  
բաժնելու համար : Բայց դուք ընդհա-  
կաւորն միշտ ամբողջով միացեալ ե-  
ղիք իմ հետ, եւ մի՛ յաղթուիք ա-  
նանց խորհուրդներէն ու թերեւորու-  
թիւններէն, որք եկեղեցւոյ թշնամի  
են, եւ ձեզ բարեւ չ'են կամիր :

« Ահաւասիկ կը կրկնուի Յիսուս—  
Քրիստոսի փոխանորդին վրայ, ինչ  
որ Յիսուս—Քրիստոսի վրայ ալ ե-  
ղած էր, երբեք Պիղատոսի տաճանը  
քաշուեցաւ : Պիղատոս փրկին անմե-  
քութեան վրայ համարուած էր, եւ  
կը վաւարէր զայն աղատել, բայց  
երբ լսեց այն խօսքը որ եթէ զայն  
արձակէ՝ կայսեր բարեկամ չ'է, վախ-  
յաւ, եւ մարդկային անհաճութեան  
յայթուելով՝ փրկիչը հրէից կամա-  
ցը յանձնեց, Հանդիսաւոր ժամանակ  
մ'է այս յորմէ մեզ ալ կ'անցնին :  
Ինչպէր յաւիտենական կենաց ըսկըզ-  
բունքին, եւ եկեղեցւոյ ու Սուրբ Ա-  
թոռին իրաւանց վրայ է, որոց համար-  
տութիւնն աշխարհ ամենայն կը ճան-

չէ, բայց անոնք որ կայսեր բարեկամ  
կ'ըսեն իրենց համար, եւ յեղափո-  
խութեան բարեկամ են, անոնք Ս.  
Աթոռոյս իրաւանց դէմ կը մարտնչեն :

« Չ'խաբուինք անոնց սպառնա-  
լիքէն կամ խոտուածներէն : Ո՛հ, չ'ը-  
մանինք Պիղատոսի առեանին դատա-  
ւորաց, այլ պաշտպանենք Աստուծոյ  
սուրբ դատը, առանց աշխարհի դրուա-  
տիքէն ու ծախահարութիւններ խաբ-  
ուելու, եւ չ'զարհուրինք անոր ա-  
նարգանքէն, զոր մեր օրովը հաս-  
րակաց կարծիք կ'անուանեն, եւ որ  
այնչափ թշուառներ իրեն զոհ կ'ընեն :

« Դարձեալ կը կրկնեմ. միացէ՛ք  
իմ հետ եւ ո՛չ յեղափոխութեան մի-  
ացէ՛ք իմ հետ ճշմարտութեան եւ  
արդարութեան սրբազան իրաւունքը  
պաշտպանելու, եւ մի՛ հրապարակե՛ք  
ժողովրդականութիւնն կամ ծախահա-  
րութիւններէ, քանզի ձեր միտքն ու  
հոգին պէտք է առ իս ուղղեալ եւ իմ  
վրաս հաստատուած ըլլայ, եւ ո՛չ յե-  
ղափոխութեան : »

Գեր. Հասունեան իւր պաշտօնակից  
եպիսկոպոսաց կողմանէ պատասխա-  
նելով՝ « մշտնջենական երախտագիտու-  
թիւն » յայտնեց Ս. Պապին այս նոր  
չնորհաց վրայ, եւ յարեց .

« Պարտք կը համարիմ ինձ, Սրբազ-  
նատուրը հայր, հոս ներկայ գտնուող  
եպիսկոպոսաց կողմէն հաւատարիմ  
թարգման կազմելով, Ձեր Սրբազնու-  
թեան մեր անցեղին հաւատարմու-  
թեան զգացմունքն յայտնեմ առ Ա-  
թոռն Պիղատոսի եւ առ Ձեր Սնձն  
Սրբազն : Այո՛, այս հաւատարմու-  
թիւնը զօրաւոր եւ անկեղծ է եւ պի-  
տի ըլլայ միշտ, մանաւանդ առաւել  
կատարեալպէս պիտի փայլի ներկայ  
պարագայից մէջ, ուր կը գտնուին  
այժմ Տիեզերական ժողովոյն գումար-  
ման միջոցին, աշխարհ եւ կաթոլիկ  
եկեղեցին : »

« Սրբազնատուրը Հայր, կատարեալ  
վստահութիւն ունինք որ այն մեծ խն-  
դիրը, որոյ վրայ Ս. Ժողովը կ'ըրարի,  
'ի մօտոյ եւ ընդհանուր հաւանու-  
թեամբ պիտի որոշուի, վասն ամենամեծ  
փառաց Ս. Աթոռոյ եւ Ձեր Սրբազն  
անձին : Վստահ ենք որ ամենակատար-  
եալ միութիւնն եւ փոխադարձ սիրոյ  
ընդհանուր հաստատութիւնն անկէ պի-  
տի բղինն : Այս կերպիւ վստահանու-  
մի ժողովն առաւել զիւրութեամբ,  
օգտակարապէս եւ ուրախութեամբ  
պիտի յառաջ տանի իւր փրկարար  
գործը, եւ այսպէս եկեղեցւոյ յաղ-  
թութիւնը պիտի ապահովի ընդդէմ  
այն մարտութեանց որք կը մարտնչին  
եկեղեցւոյ դէմ : Աշխարհ խաղաղու-  
թիւն եւ անդորրութիւն պիտի ճա-  
շակէ, որք իրեն պիտի վերադարձը-  
ին չնորհիւ եւ 'ի փառսնոյն Ս. Ժողո-  
վոյ, Ս. Աթոռոյ եւ Ձեր Սրբազնու-  
թեան : »

« Միւսանդամեւս կ'ըսեմ Սրբազ-

նատուրը Հայր, այո՛ չ'պիտի դադարեմ  
'ի խորոց սրտի արթնելէ առ ամենա-  
բարեկամ Աստուծո՛ք, որպէս զի ընդ եր-  
կար պահէ Ձեր Սրբազնութեան թան-  
կագին օրերը, որք սիրելի են ամենե-  
ցուն եւ կարեւոր վասն բարեաց եւ  
փառաց ընդհանուր կաթոլիկաց : »

Պապին Արեւելեան ծէսերն ան-  
խախտ պահելու խօսքերը կարգաւորի  
պահ մը կ'ուզէինք հաւատ ընծայել  
անոնց, բայց յետագայ խօսքերը բը-  
նաւ տարակոյս չ'թողուցին որ զուտ  
քանի մ'արտաքին ծէսեր միայն ըսել  
կուզէ. իսկ Արեւելեայ եկեղեցական  
իրաւունքներուն ու արտօնութեանց,  
զորս Հռոմ յափշտակած է, անունն  
անգամ չ'տար : Ընդհակառակն եր-  
կարծին կը խօսի Հռոմէացի Աթոռոյն  
իրաւանց վրայ, զորս միայն արդար եւ  
ճշմարիտ կը համարի, անոնց դէմ յար-  
ձակողներն յեղափոխական եւ կայ-  
սեր՝ այսինքն տէրութեանց ալ թշնա-  
մի կը հրատարակէ : Կը ծանուցանէ  
թէ ինք Պիղատոսի պէս աշխարհական  
նկատմանց եւ անհամութեանց համար  
բնաւ չ'պիտի թողու որ արդարութիւ-  
նը իմացի Պապութեան իրաւունքն  
առ տն կ'ոխտի, եւ եպիսկոպոսները  
կը հրաւիրէ որ « հասարակաց կար-  
ծիք » ըսուած բանին եւ եկեղեցւոյ  
թշնամիներուն ապառնալիքն եւ խոտ-  
ուածն չ'խաբուելով իրեն հետ միա-  
նան : Գեր. Հասուն ալ իւր պաշտօնակի-  
ցաց կողմանէ Ս. Պիղատոսի Աթոռոյն  
անցեղին հաւատարմութիւն կ'ուխտէ,  
եւ անոր անխաղաղութիւնն այժ-  
մէն կը հաշտէ :

Սրտաշարժ միութիւն. Տէրը կը  
խօսի, ծառայն գլխաւոր հիացանդու-  
թիւն կը յայտնէ. իսկ ժողովուրդը՝  
անոր խօսքը չ'ըլլար. Պապը՝ « հասա-  
րակաց կարծիք » եւ ժողովրդեան  
ձայնը չ'ճանչեր, միութիւն, հնազան-  
դութիւն, հոգւոյն Սրբոյ արթնք, մա-  
նաւանդ « խոնարհութիւն » կը խնդ-  
րէ, Հետեւաբար ամենայն ինչ կատար-  
եալ, կաթոլիկ ազգայնոց ձայնը Հռոմ-  
մայ առջեւ ձայն բարբառոյ յանա-  
պատի է. կամ պէտք է խոնարհին,  
կամ անդառնալի կերպիւ Հռոմէն  
բաժնուին :

Գաղղիոյ մէջ հասարակաց կարծի-  
քն եւ խորհրդարանները կայսեր կա-  
ռավարութեան առաջարկած սահմա-  
նադրական փոփոխութիւններով զրա-  
ղած են, որք անձնական կառավարու-  
թեան գրութիւնը բողոքովն սահմա-  
նադրական գրութեան կը վերածնու-  
նէ : Ահաւասիկ առաջարկեալ փոփո-  
խութեան ծրարները :

Յօդ. 1. Երեւոյս օրէնսդրական  
իշխանութիւնը կայսեր եւ Բրէնսպեր  
ժողովին հետ կը բաժնէ : Օրինաց ա-  
ռաջարկութիւնը Երեւոյս իշխանութիւն  
կը վերաբերի Այսու ամենայնիւ արոց վե-  
րաբերեալ ամեն օրէնք նախ Օրէնդու-

դիր ժողովէն պէտք է ընդունուի :  
Յօդ. 2. Երեւոյս անդամոց  
թիւը Օրէնսդր ժողովոյ անդամոց թիւ-  
ւոյն մինչեւ երկու երրորդը կրնայ հա-  
նել առանց հաշուելու : Երեւոյս  
այն անդամները որք յերաւանց ան-  
դամ են :

Կայսրը չ'ընար տարին քսանէն ա-  
ւելի ծերակուտի անդամ անուանել :  
Յօդ. 3. 1852 յունվար 14 ի սահ-  
մանադրութեան 31 եւ 32 յօդուած-  
ներով Երեւոյս տրուած սահմա-  
նադիր իշխանութիւնը կը դադարի :

Յօդ. 4. Ներկայ սահմանադրին յա-  
րակից տրամադրութիւնները որք 1851  
դեկտ. 14—21 եւ 1852 նոյեմբ. 21—  
22 ժողովրդական վճիռներուն մէջ  
պարունակուած են, կամ անոնցմէ կը  
բղին, կայսրութեան սահմանադրու-  
թիւնը կը կազմեն :

Յօդ. 5. Սահմանադրութիւնը ժո-  
ղովրդեան կողմէն միայն կրնայ փոփո-  
խիլ կայսեր առաջարկութեամբ :

Յօդ. 6. Սահմանադրութեան 23  
յօդուածին երկրորդ հատուածը եւ 19  
26, 27, 28, 29, 30, 31, 35, 40, 41,  
52 եւ 57 յօդուածները խախտուած  
են, ինչպէս նաեւ ներկայ սահմանադր-  
ւին հակառակ եղող ամեն տրամադ-  
րութիւնք, առանց դաշտելու այն խո-  
փանմանց, որք 1852 նոյեմբ. 11 ի  
եւ 20 ի ժողովրդական վճիռներէն,  
եւ այն ժամանակէն 'ի վեր եւ մա-  
նաւորապէս 1869 սեպտ. 8 ին տրուած  
սահմանադրութեան յառաջ կուգան :

Յօդ. 7. 1851 յունվ. 14 ի Սահ-  
մանադրութեան եւ անկէջ 'ի վեր հը-  
րատարակուած սահմանադրութեան այն  
ամեն տրամադրութիւնները որ յայտնա-  
պէս կամ զօրութեամբ խախտուած  
չ'են, կամ 4 յօդուածին յաւելուածին  
մէջ նշանակուած չ'են, օրինաց զօրու-  
թիւն պիտի ունենան :

ՀԱՌԱՐԱՐՈՒՄ

Պապը 8 ապրիլ  
Պաշտօնէից փոփոխութիւնը կ'ապա-  
ուի : Եւրոմոց եւ կրօնական դրոյոց  
պաշտօնեաներն հրաժարական տալու մը-  
տադիր են :

Փարիզ 9 ապրիլ  
Մէմօրիալ Տիւրօմաթի կը հաւաստէ  
թէ Պապական կառավարութեան հետ  
իւրաքանչիւ պէյին բանակցութիւններն ա-  
պարդիւն եղան :

Փարիզ 9 ապրիլ  
Պաշտօնէից փոփոխութեան խօսք կայ,  
որովհետեւ պաշտօնեաներէն ոմանք չ'են  
ուզեր առաջարկեալ սահմանադրին 13  
երրորդ յօդուածն ընդունիլ :

Քրէօզի աշխատութեանց զարգացու-  
մը կը շարունակէ, որովհետեւ զորոյ մ'ե-  
լեր է հոն թէ Գաղղիոյ բոլոր գործաւոր-  
ները վաղը օտք պիտի ելնեն եւ աշխա-  
տութիւնները զարդեցնեն :

Փարիզ 9 ապրիլ  
Սահմանադրութեան փոփոխութեանց  
վրայ ժողովրդեան հաւանութիւնն ստա-  
նալու քուէարկութեան միջոցին քաղա-  
քական գումարմանց թոյլտուութիւն պի-  
տի ըլլայ :







ընտանքիս, Մատիսի պատուական է-  
ջերուն մէջ ։

Կարնոյ դպրոց այս տարի աւելի  
վայել մ'առաւ ։ Եղայք բաւական յա-  
ռա՛վ դպցած են իրենց ուսմանց մէջ,  
առնց արդիւնք ցոյց տալու համար  
իննամանայ հրապարակական հարցա-  
քննութիւն մ'եղաւ մարտ 2 ին երկու-  
շաբթի օրէն սկսեալ մինչեւ ուրբաթ ։  
Թող տարով երկուշաբթի երեք-  
շաբթի եւ չորեքշաբթի աւուր եղած  
հանգէնները, որք հայերէն լեզուի եւ  
հայերէն ուսմանց կը վերաբերէին, մի-  
այն, անցնինք ուրբաթ աւուր հանգէ-  
սը նկարագրելու ։

Ուրբաթ օրը ներկայ էին քաղա-  
քիս շատ մը երեւելի ազգայինք, եւ  
օտար ազգիք, Յոյնք եւ Հայ կաթողիկէ,  
նաեւ տեղւոյս Բարձրապատիւ կուսա-  
կալը իր սյարադայիւք հանգերէն, որք  
իրենց ներկայութեամբ աւելի շուք  
կուսային հանգէնին, Տղայոց ուսմանց  
քննելիք աւարկաններն էին թուաբա-  
նութիւն, աշխարհագրութիւն, տաճ-  
կերէն, դաղըներէն եւ ձայնագրու-  
թիւն ։

Չքանակաւ ըսելու թէ տղայք տաճ-  
կերէն եւ դաղըներէն ճառեր ալ խօ-  
սեցան մեր Օգոստոսիաւ կայսեր փա-  
ռաց եւ ուսման կարեւորութեան վը-  
րայ ։

Եւ ահա խումբ մ'ալ զօրք դըպ-  
րոցին շուրջը պարառեալ իրենց նուա-  
դարաններով կ'երգէին ։ մէկ կողմէն  
դուրսը նուադարաններ կը հնչուէր,  
միւս կողմէն տղայոց հարցաքննու-  
թիւնները կը լրային ։

Հանգէսը վերջանալէն զինի Բարձ-  
րապատիւ կուսակալը գեղեցիկ ատե-  
նաբանութիւն մ'ըրաւ դաստիարա-  
կութեան վրայ, որ բոլոր հանդիսա-  
կաններուն 'ի խորս թափանցեց, եւ  
այսպէս հանգէսը ժամ 6 էն մինչեւ  
9 տեւեց ։

Արդարեւ շատ մանրամասն բաներ  
կան գրելիք, այն ալ կը թողու՛մ սուր  
գրիչ ունեցողներու ։

Կարգէր Մահեան  
Աշակերտ Աբգինուս  
... Զարեհի Հոյոց Կարնոյ

... Խմբագիր

Անշուշտ նամակիս էութենէն կըր-  
նաք գուշակել թէ իզմիրի վրայօք տա-  
լիք տեղեկութիւնս խիստ ցաւալի է ։  
Վասն զի այսօր ամէնքը կը լսեն եւ  
մեղի միայն կը մնայ յասպարէղ իշ-  
նալ ։ Իզմիր այսօր շատ ողբալի է քա-  
նի որ իր կենդանութեան հոգին սարա-  
ռած է ։ Ո՛րն է ազգին կենսական ու-  
ղիւն ։ — Դպրոցը, սակայն նա այսօր վար-  
ժապետներէ զուրկ մնացած՝ աւերա-  
կի մը սեւ ստուերը կը կրէ ։ Գործունե-  
ւոյ երկտասարդութիւն՝ ոչ երբէք, եւ  
գրելթէ ամէնքն ալ յուսահատ իւ-  
րաքանչիւր ինքիւնը մինակ կարծե-  
րով չի համարձակիր ապագային ըս-  
պաւանացող վտանգին առաջին առնե-  
լու եւ անդ մը ցուցնել ։ Այս ամէնը  
առիթ տուին որ իմ սրտիս գագաթա-  
նը հետ միցնելով ալ չընեմ, եւ ըստ կա-  
րի իմ անդօր գրելովն նկարագրեմ իդ-  
միրի ունեցած արդի թշուառութիւնը ։

... Խմբագիր, տեղւոյս երկուսեւ վար-  
ժարանները զոյց եւ հայ մանկան իւ-  
րենց ըրած կորուստին վրայ ողբալով  
թափառաւոր լիկ փողոցները օգնու-  
թիւն կ'աղաղակեն ։ Բայց իրենց լսող  
չըլլար ։ Ճարեմնին հատենով տեղւոյս  
Ս. Աւանդորդին կը գիմեն իրենց  
խեղճութիւնը անոր նկարներով ։ Բայց նա  
իրենց յոյս տալու միջոցաւ խօսքե-  
րէ ուրիշ դարման մը չի կրնար զըտ-  
նել ։ Եւ յերաւի ինչ կրնար ընել քա-  
նի որ իր հրաւիրագրներն անպատու-  
լանի եւ բեմական յորդորները ան-  
լըսելի կը մնան ։ Եթէ տակաւին կըր-  
կին վարժարանաց վիճակին դարման  
մը չ'տարուի, այն ատեն 1870 ը. 9 միւս-

նալոց սեւ ճակատադրին թուակա-  
նը պիտի սեպուի ։ Եւ օգնութիւն  
խնդրող հայ մանկան 'ի փոստակ յու-  
սաթափուր եւ 'ի դուր չոր աչքերէ  
արտասուք սպասելու՝ կը քաջալերեմ  
որ թող Ամենապատիւ Ս. Հայրիկին  
գիմեն, որ լուսաւորութեան պաշտ-  
պան եւ յառաջդիմութեան անձնուէր  
է ։ Թող նորին Սրբազնութեան ներ-  
կայանին իրենց խեղճութիւնը որ չը-  
պիտի զըստայ անշուշտ իրենց ընելիք  
առաջարկութիւնը ընդունելու, եւ պի-  
տի ջանաց աղատել Զմիւռնացիքս ներ-  
կայ աղէտալի վիճակէն՝ որ աղբի մը  
կործանման նշան է ։

... Խմբագիր, ներկայս որ աւելի  
Զմիւռնացի հայուհւոյ մը սրտին հա-  
ռաչանաց արգասին քան իզմիրի ող-  
բալի վիճակին անթերի նկարագրին է,  
որն որ եթէ պարտադանցներու անուղ-  
ղակի յանդիմանութիւն մը չսեպուի,  
գէթ իզմիրի անցեալ համբաւը ճշ-  
մարտեալ վկայութիւն մը կրնայ սեպ-  
ուիլ, եթէ արժան դատէք, հաճե-  
ցէք ձեր էջերուն մէջ ընդունիլ, որով  
պիտի թողուք զմեզ շնորհապարտ ։

1870 Մարտ 28

Յիւսէմ-Յիւսէմ Երեմի

Սերաստիա . 47 Մարտ 1870

Խմբագիր

Սրիկայից պատճառաւ քանի մը հայ  
կանայք, ինչի տաւն բանտարկուելին  
ճանուցած էի, սակայն Գեր. Երեմիա Ս.  
հօր մասնաւոր ջանիւքը երկուքը աղա-  
տեցան, իսկ միւս մնացածներէն մին սառ-  
տիկ հիւանդանոցով վիճեց ։ ասոր պատ-  
ճառն ալ բնութեան արճնոցէ դուրս  
Պարսա՛մ անուն անձն եղած է հիւանդու-  
թիւնը լաւ չի կրնալ ընդունել համար, բայց  
երբ քաջամասն Մեծ. Տօնթօս Շիրինեան  
ըստ արժանաւոր քննելով վտանգաւոր ըլ-  
լալուն տեղեկագիրը ներկայացոյց անոյ-  
ջապէս Վսեմ. կուսակալին (չի մոռնալ  
ըսել որ վերջինք աղքատ ըլլալուն պատ-  
ճառաւ ձրի նայեցաւ, իսկ Պարսա՛մ մին-  
չեւ իր արժէքին հնդապատիկը չառած՝  
չէ գացած) ։ Սարգիս անուն արքեպիսկոպ  
մը իւր կինը միշտ կը ծծէ եղբոր, որով  
կինն ալ ստիպուեց է աղակալանաց մէկին  
ըով մնալ ։ Քանի որ յետոյ այս անձը գի-  
նով վիճակի մէջ Վսեմ. կուսակալին ներ-  
կայանովով կ'առաջարկէ թէ ինք Մահե-  
տականութիւնը ընդունած է, իրեն ա-  
նուն մը որոշէ ։ Բայց Վսեմ. կուսակալը  
նկատելով անոր այլանդակ վարմունքը,  
համոզելով յետ կը դարձնէ, բայց նա  
կրկին աղբարագիր կուտայ որ անպատճառ  
մահեմտական պիտի ըլլայ, եւ թէ իր կի-  
նը ուրիշ ըով կ'ենայ ընաւ չուղեր ։ Բայց  
կինն ալ բոլորովին կը մերժէ իւր այրը  
կենաց ապահովութեանը երաշխաւորու-  
թիւն ուղելով ։ այժմ Ղասէ էֆէնտիին  
յանձնուած է ։ Արդեւքը ուրիշ անգամ  
կը գրեմ ։

Քօմիսիօնը արժեւորի արոց համար ա-  
ւելորդ պահանջումներ կ'ընէ հակառակ  
արգարտութիւն կամաց Բարիխան կայսեր ։  
Տեւ-Եւ. Զարեհի օտոնախորտած  
հարսանիքի հանդէսի մը մէջ՝ ժամա-  
նակու տաճկացած եւ 'ի վերադարձին կա-  
րապետ եպիսկոպոսին քահանայ ձեռնադ-  
րուած Տ. Գրիգոր անորոշան քահանայն Գե-  
օնի նման կը խաղայ ։ Ոմանք անկայել  
է ըսելով զայն յանդիմանած ժամանակ  
նին, նա կը պոտախախտէ թէ՛ ինծի հա-  
մարուեալ խմել, խաղալ ... Եւ հանգիստ  
կենտը անցունելու է ։ Յմիտի արարող-  
ութեանն օտոնախորտ ըստ տեղական սովո-  
րութեան աչս Տ. Գրիգոր չ'ըսուելիք խօս-  
քեր կ'ընէ կանանց՝ առանց իրաւունքի ։  
Գարբիէ, Յովսէփ, եւ Վարդան խոտվա-  
յոյց կ'ընեն իրենց վրայ ալ ուրիշ առթիւ  
պարտք կը համարիմ երկարօրէն գրել  
եթէ ընթացքին փոխելով իրենց նուիրա-  
կան կոչման չ'փոխուին ։

Գաղաքին մէջ 6—7 տուն բողոքականք  
կան, բայց իրենք ալ չեն գիտեր ինչ ըստ-  
քի ծառայելին, այս օրերս մարդ որսա-  
լու համար երկուս վարժարան մը հա-  
տառած են մէկ օրահի մէջ, ուր կը դըտ-  
նուին 70 ի չափ աշակերտք, 40 մանչ եւ 30

աղջիկ, որոց խիստ մեծագոյն 'աւր հայ  
են ։ արդեւքս ծնին է հասարակ ընթերց-  
մունք ։ Բայց Գեր. Երեմիա Ս. Զօր աղղու-  
յորդորանքներովն աղայք կրկին Հայոց  
դպրոցը դարձած են ։ Բայց վարժապե-  
տաց ամսականն չ'տրուելուն համար վար-  
ժապետը հրաժարած ըլլալով՝ անխնամ  
մնացած են կրթութեան կարօտ անմեղ  
գոտնուկները, եւ իրենց սուղ ու անդին  
ժամերն 'ի դուր կ'անցունեն, առնց պատ-  
ճառը տեղւոյս քանի մը ետապետք են ։  
վարժապետք ցորտին՝ որպէս զի իրենց կե-  
րակուր մնայ ։

Ուրիշ նշանաւոր դէպք մ'ալ ։  
Մահեմի Միւրտին լծակից Օտապաչ-  
եան Հնազանդ տիկինը երկար ժամանակ  
անկողնոյ ծառայելէ ետեւ կը հասկնայ որ  
չպիտի կրնայ աղատիլ, պատուաւոր դը-  
րացիք ու աղջկանք նաեւ իւր քահա-  
նայն կոչելով իւր գոյքը կտակ ընէ՝ յետ  
մահուան անթերի գործադրութիւնը խնդ-  
րելով եւ ծանր ծանր սարսափաբերութիւն  
դնելով նոյա վրայ ։ Անոնք ալ կարճա-  
նադրին ու կ'ստորագրեն կտակը, որ Ս.  
Սարգիս եւ Աստուածածնայ եկեղեցեաց  
հաղարկան դահեկան, Ս. Նշանի եւ ա-  
նապատ վանոց նոյնպէս հաղարկան  
դահեկան, զարդոցներուն նմանապէս հաղա-  
րական դահեկան, աղքատաց հինգ հա-  
րիւր դահեկան ժամացոյց մը եւ մուշտակ  
մը ըովի սպասարկուն, 250 դահեկան ծե-  
րունի ֆիւտային, իւր ամուսնոյն հօրը ըն-  
տիր անկողին մը եւ 1000 դահեկան, նոյն-  
պէս քահանայից եւ այլն նուէրներ կորո-  
շէ ։ Ժամանակէ մը յետ՝ հիւանդութիւնը  
կը ծանրանայ եւ քահանայ կոչելով իւր  
վերջի ճոգեւոր պատրաստութիւնները կը  
անենէ՝ կրկին պատուիրելով իր կտակին  
անթերի գործադրութիւնը ։ Երբոր կը  
մեռնի, նոյն օրը կտակը եկեղեցին կար-  
դացուելով, իւր կտակին համաձայն ա-  
նեան փառաւորութեամբ պաշտօն եւ  
թաղման հանգէս կը կատարեն ։ Սակայն  
կտակին անգործադրելի կը մնայ ։ Այլը  
հետեւ երկիր գացած ըլլալով երբ որ ե-  
կաւ, իւր կնոջ այս բարեկամական կտակը  
իմացաւ, առաջարկեց որ անյապաղ գործադ-  
րի ։ Բայց Մատրաֆեան ցաղիւր Լ. Ֆէնտին  
հանգուցեալին ժառանգութեանէն զուրկ  
նալուն համար իրեն ծանր եկած էր, Ղա-  
սապաչեան մահեմի Աստուր աղայի խրա-  
տով Նէֆի Միւրտի եղած է կըսէ եւ դատի ել-  
լելով, Ղասապաչեան մահեմի Աստուր, Գ.  
Պրիմիսեան Նազարէթի, Ալիքանեան Ա.  
հարոն, Ֆանուսեան Յովհաննէս, Եէկէն  
Սարգիս անուն անձինք ալ անոր ըսածը  
հաստատելու վկայութիւն կուտան ։ Զար-  
մանալին սա է որ տանը երբէք դործէն  
տեղեկի չեն, եւ Ահարոն ուրիշ ատեն  
կարապետ կ'ալկապոսի խորհրդով սուտ  
վկայութիւն տուած է ուրիշներու համար  
եւ իրոմ անդամ եղած է ։ Իսկ գործը  
քննութեան ենթարկուած է ։ անշուշտ  
եւնք որ ճշմարտութիւնը պէտի յայտնուի,  
ինչպէս որ Միւրտի թիւի հիւքեամ էֆէնտին  
խոստացած է ։

\*\*\*

Մեքսիկէ Բրաւոս Գեղեցիկէն Հար-  
նալ-Բիւնէ (Գե. Բիւ. 836)

Աքիւնու գաւառին Ուրտան գիւղին  
աղբաւք եւ քաջիչխան ։ Կէս օր նոյն  
գիւղին միւստիւրին տան արահին մէջ գի-  
շերը ժամ երկուքին երկու գնաւով չը-  
րացան մը կը պարպուի կուրծքէն դուրս  
տալով իսկոյն հոգին կուսաղէ ։ Գնաց  
կերթայ, եւ շատերն ալ անոր պէս պի-  
տի երթան ։ Եւ ճիւղի մը գաւառին Տէրք  
ըսուած գիւղին Տէր Գովհաննէս քահա-  
նային որդւոյն պէս գիշերով անկողին  
մէջ զաշտնելով կը վրադարձնի ։ Գնաց  
կերթայ եւ շատերն ալ նոյն գէս պիտի եր-  
թան ։ Կամ թէ Մոկալ գաւառին իսկ Մո-  
կայ քաղքին բարեհամբա Նիթոյ իշխա-  
նին պէս հրացանի գնաւով զոհ կըլլայ ։  
Գնաց կերթայ եւ շատերն ալ նոյնպէս  
պիտի երթան ։ Ա՛լ մի կը համարձակի ճշ-  
մարտութիւն երեւան հանել կամ հրա-  
տարակել 'ի լուր արխարիս ։ Այս հար-  
ուածները արտաքին թշնամիներ կը կը-  
րենք ։ աւաղ ֆիւրտիստանու թշուառու-  
թեանց տեսնանք ներքին ռեպրիմ եւ ար-  
դէտ աղգայնոցներէն կրածնին ։ կը կրնք  
եւ գեւ պիտի կրնք հարուածները, ինչ  
անսակին ։ Երկուք անոնք թեկադրու-

թեանց շարժումը նկատելով ցուօք սրտի  
կըսենք, արհաւ, թէ ընկերութիւնս եւ  
թէ դպրոցը եւ թէ չըմակայ գաւառաց  
մէջ եղած ուսմանց շարժումը պիտի դոհ  
ըլլան մէկ անձնաշահին (Պապոյն) որե-  
ւիմ կրկնը՝ իւր խաբուսիկ խօսքերով հա-  
մոզած արքանեակներուն միջոցաւ ։ որուն  
առաջը տանելու մտքը պարտ կը համա-  
րինք Պատրիարքարանի ուշադրութիւնը  
հրաւիրել որ նոյն անձնաշահը իւր տունը  
հանգիստ նստեցունել եւ ուրիշները նեն-  
գուպատիր թեկադրելէն լռեցնել ։

Փութայ քանդի նոյն անձնաշահը  
կը ճոյնէր կը ճոյնի եւ պիտի ճոյնի իւր  
կիրքը յազեցնել ։ օրինակի համար քանի  
մը ապացոյցներ հոս երեւան հանեմք ։  
Ա. 1868 Ս. ծննդեան օրը մի հետադրեց  
'ի Տիրանիկերտ առ Գեր. Ս. Յակոբ եւ  
պիսկոպոսն զինքը իրաւացնելու առանց  
աղկին գիտութեան տեղւոյս ազգային  
կնիքովը ։ — անձնաշահը Բ. տեղւոյս եկե-  
ղեցոյ անօթները կը գողցուն նոյն թը-  
ուականին ։ հասարակութիւնը կատալա-  
րութեան կը դիմէ դողելը գտնելու խու-  
զարկութեան միջոցները խնդրելով, եւ ան-  
լըսելի կըլլայ ։ 'ի հարկէ ստիպեալ խանութ-  
ները կը գողցուն ։ կատալարութիւնը կը  
խոստանայ աղբու միջոցով խուզարկու-  
թիւն ընել ։ մի համոզեց որ շուտով խա-  
նութիւնը բանան, որով խուզարկութիւ-  
նը դադարեցաւ եւ անօթները ցարկ ան-  
շայտ են ։ — անձնաշահը Գ. նոյն թուա-  
կանին չորս քրիստոնեայ կանայք Վրաս-  
տանու երկրէն տեղս կը բերուին, տա-  
ճիկ են ըսելով հանրադրութիւն կը չին-  
ուի տաճկաց կողմանէ առանց հարցա-  
քննութեան ։ մի ստորագրեց՝ անձնաշահը  
Վերջը կը հարցունի, քրիստոնեայ ըլլալին  
կը յայտնուի, մէկը յիլ ըլլալուն պատճա-  
ռաւ կը մնայ եւ միւս երեքը Տիրանա-  
կերտու վայրէն հոն կը կոչուին եւ անկէ  
իրենց հայրենիքը կը դիմուին ։ Գ. առանց  
աղկին գիտութեան երկու եպիսկոպո-  
սաց միջոցաւ Պատրիարքարանէն առ տեղ-  
ւոյս կատալարութիւնը իւր անձնա-  
շահութիւնը բարձրացնելու համար պատ-  
ուիրագիր տուողը մի էր ։ — անձնաշահը Ե.  
Ե. Առաւօտեան ժամերգութեան փառք 'ի  
բարձունս ըսելու ատեն Պարտադրի գիւ-  
ղացիներուն խոռո թաղման թիւերը եկե-  
ղեցոյ դրանը առջին « Առաջնորդը կա-  
չառակիւ է, մեր զայնախառն բարեկամ-  
նէ, մեր տունը քանդեց » պօռայնելու  
առիթ տուողը մի էր ։ — անձնաշահը Զ.  
Ե. Ե. անունը ստորագրող աղգային զպ-  
րոցին ամիսը հինգ դահեկան տուրք տա-  
լու, եւ հինգ ամիս չտուող եւ ուրիշներուն  
ալ չտալու առիթ եղողը մի էր ։ — անձնա-  
շահը Բայց այժմ աղեւտանութեամբ կա-  
կուղ փուշի պէս կուտայ նոյն տուրքը ։  
Ե. Անձնուէր ընկերութեան ճիւղին բա-  
ժանորդաց չորրորդ մասը իրենց չարա-  
թական տուրքը ճշտալու առիթ եղողը  
մի էր ։ — անձնաշահը Ը. Ե. եկեղեցոյ  
բաղը եկող այլատեսակ անվայել խօսքե-  
րով Ընկ. անդամները նախատողը որուն  
կըրպայն է ։ — անձնաշահին Թ. Գիշեր մը  
խումբ մը աղխուր թեմալը պաշտեալները  
խորհուրդ ընելով վաղը կերթանք վարժա-  
պետին քանի մը ապստակ դարձելով թե-  
ւեւ կը բռնենք դուրս կը հանենք, հար-  
կաւ դպրոցը կը դողուի, ընկերութիւնն ալ  
կը խանդարի ըսողները որուն ատեն մէջ  
նստած կընդնին ։ — անձնաշահին փեսային,  
որ իւր անձնաշահութեան ջերմ պաշտ-  
պանն է ։ Ժ. Աղջկանց դպրոցը կը բաց-  
ուի, քանի հոգի չափ տուրք տալու կը  
ստորագրուին, ստորագրուելէն 'ի զատ  
զանոնք հրաժարեցնելու եւ նոյն ընկերու-  
թեան վրայ բաճարելու առիթ եղողը մի  
էր ։ — անձնաշահը ։

Արդեւք այս տեսակ կից տէր եւ  
երկդիմակ մարդէն այս բարեբաւ խոր-  
չերուն մէջ վախճալու չի մի, տէր վըր-  
կէ եւ աղատէ, տակաւին կը ճոյնի նենգ  
ու պատիւ խօսքերով թէ քաղաքէս եւ  
թէ չըմակայ գաւառներէն ստորադրու-  
թիւն հաւաքել եւ կաշառատութեամբ  
վաւերացնել տալով գուցէ զինքն կրկին  
անգամ կարգել տայ նոյն պաշտօնին մէջ ։  
Ողբացիր քիւրտիստան, դեռ նոր աղղու-  
թիւն բառին ձայնը տակնուվեր մօտեցաւ,  
ան ալ շուտով իսկ կը ջանայ կոյր նա-  
խածը ։ . . Ո՛հ, թող երկինքը դատա-  
խալ ըլլայ հայրենաստեայ Վասակներուն



«Եւ անձնապէս յիշուածներուն եւ տնոց արբանեակներուն Մեծ. Տեառք մընացեալ կրած հարուածներուն, որոց հազիւ չորրորդ մասը նկարագրեցինք, եթէ ընկերութեան անդամները անասունած մատուցեալն ոմն ի ճանապարհի, որով եւ ոմն ընդ պատուհանն հրացանով զոհ չեղան անշուշտ, հետզհետէ պիտի հաղորդենք ձեզ, ուստի յատկապէս կը խնդրուի Ձեր ազգայնականութիւնը, որ փութաբար արտաբերէ ի ձեր շնորհը Մեծ, հիմնադիր Քրիստոսոստոսէ Էֆէսոսի յիշուած, եւ մեր դիմացին թէ Մասիսի միջոցաւ եւ թէ Գոնչիկի միջոցաւ հրատարակել տալու անյատկաւ խնդրել: Քանզի կէտ առ կէտ հրատարակուած տեսնալու կապանքը: Գուցէ հարուածներէն կրած վէշքերնուս չառնէն քիչ դարձան տարուի Ազգայնական միջոցաւ, որով մնալով Ձեզ եւ ընդհանուր քիթիկ Ազգիս անձնուէր ծառայը:

Ստորագրողներն:

Կ. Պօլիս 26 մարտ 1870

... խմբագիր:

Հարկ չէ ըսել թէ օտար լեզուներով գրուած ընտիր եւ կարեւոր երկոց թարգմանութիւնքը ուրեքան կը նպաստեն մեր Ազգին մէջ գրագիտութեան զարգացմանը եւ մտքերու մշակութեանը:

Վերջերս Հայ մամուլին ի լոյս ընծայած դադողական նշանաւոր հանձարներու արդիւնքն եղող այն եզրական դործոց (Թշուառաց, Թախառական-Հրէի, Ռաֆայէի, Մօնթէ-Քրիսթօյի, Փարիզու-Դաշտնեայ) թարգմանութիւններով մեր ազգային մշտաւորական ու բարոյական յառաջադիմութեան մատուցած ծառայութեանց մեծութիւնը ո՞վ կարող է ուրանալ: Սոյն գործոց հասարակութեան կողմէն գտած եռանդուն ընդունելութիւնը քաջաբերեց զուրիշներն ալ Հայկական Մատենադարանը ուրիշ օգտաւէտ ու դիմացիկ թարգմանութիւններով ճոխացնել հետզհետէ:

Մենք ալ Հասարակութեան ընթերցասիրական եռանդէն քաջալերեալ փութայինք «Անիծեալն» անուն ընտիր ու երկական գործին հրատարակութեանը ձեռնարկել, եւ ժողովրդեան կողմէն որ գիտէ միշտ ազգագրուած ձեռնարկները խրախուսել, գտած ընդունելութիւնն ալ արդէն Հնորակալեաց արժանի ըլլալէն զատ, ուրախութեամբ սրտի կը փութամք խմբակը, որ յորդոր եղաւ մեզ նաեւ հետեւեալ հանրածանօթ երկոց հրատարակութեանն ալ ձեռնարկել յո-

տարակութեանն ալ ձեռնարկել յոջորդարար, եթէ ժողովրդեան ձեռնարկութիւնը զմեզ այս առաքարիկն մէջ չի լքանէ, որուն բնաւ չենք սպասել:

Սոյն գործերն են:

Էռաճիկաւ. Հեղին. Համարթիւնայ. թարգմ. Ռ. Յ. Պէրպէրեանի:

Բանք հաւատացելու ուրու. Հեղ. Համարթիւն. թարգմ. Ռ. Յ. Պէրպէրեանի: Գիրք ժողովրդեան. Հեղ. Համարթիւն. թարգմ. Ռ. Յ. Պէրպէրեանի:

Սոյն գործերուն վրայ հարկ չէ հոս ներդրողներ յորինել իրենց հեղինակաց անուններն եւ ժողովրդականութիւնը բաւական զովեստ մ'են արդէն: Անկարելի եղած է որ եւ է մէկու մ'ընթերցանել զանոնք առանց ըզմայլման:

«Անիծեալն» թարգմանութիւնն ալ արդէն Պ. թարգմանիչն իւր ընտիր գրչով ծանօթացուցած է Ազգին. ուսկից դրաւ եւ գիրք ժողովրդեանի, որ ժողովրդեան ձեռքը իւրեւ երկրորդ Աւետարան մը պարտի ըլլալ մամուլը թարգմանութիւնը ուրոյած եմք քիչ ժամանակէն մէկ հատորի մէջ հրատարակելու Ասանցմէ զատ նաեւ ուրիշ ընտիր գործերու ձեռնարկներ ալ կան մեր քովը, զորս հետքահետէ ի լոյս ընծայելու պիտի փութամք առանց «Անիծեալն» հրատարակութիւնը ընդհատելու:

Խնդրեմք. ... խմբագիր, սոյն երկտողին անկիւն մը Հնորակալ Զեր պատուական լրագրոյն մէջ:

Հրատարակիչ «Անիծեալն» վէպին Մեծէնքէի Զեմբէր:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ  
ԱՂԻՔԱՆՈՐ ՏԻՄԱ  
ՀՈՉԵԿԵԼՈՐ ՈՒՄԻՐ  
ՊՕՐՃԻԱՅԻ  
ԹԱՐԳՄԱՆԵԱՅ Ի ԳԱՂԱԿԱՆԷ  
Ա. Ս. Տ.

Լրագրոյն մէջ թերթ առ թերթ հրատարակուած այս հետաքրքրաշարժ լայն լրական պատմութիւնը, որ Պապական պատմութեան մէկ սոսկակալ մասը կը կազմէ, ամբողջ կազմուած կը ծախուի մայրաքաղաքիս Հայ գրականաւոր քով եւ Մասիսի գրասենեակը: Դին 20 զուրուշ:

ԲԱՐՆԵՐՆ  
ԵԱՆՈՒՄԱՂԻԳՐԱՄ ՊԻՐ ԻՊՊՍ  
ԶԵՊԵՐԱՆԸՆ ՕՅՈՒՆՈՒ  
ՌԵՍՄԱՏԵՂԸՆ ԹԱԵ ՊԱԵ ԵԱՐԱՐ  
ՄԻԻԼԻԼԻՅ  
Ա. Յ. ՆԵՐԿԱՐԱՐԵԱՆ  
Այս տարակից պարունակութիւնը բանաստեղծական է, եւ իւր անուան հակառակ-այսինքն Պապին անսխալակաւնութեան փաստին հերքումն է: Կը ծախուի ամէն Հայ գրականաւոր քով Դին 60 փարայ:

ՆԱԿԱՆՈՒՅՄՈՒՆԻՐ  
Կ. Պօլիս Էօրիւնի վրայ թիւ 22 մաղազան վարձով նստող Մանկացեալ Մանկավարժի Ն. Բօլաքի Պատուական եւ անոր ընկեր խորտան օղլու Էօրիկին վրայ առնելով ունեցողներուն իմաց կը արուի որ 1256 տարւոյն ազգիկն առաջին չորեքշաբթի օրէն սկսեալ մինչեւ իննորդհինգշաբթի օրը մէկ շաբթուան մէջ Մանկավարժեան Գօմիթէին ներկայանալով, առեւտրական կանոնագրութեան 198, 199 եւ 200 յօդուածներուն համեմատ առնելիքին հաստատեն: Սոյն պայմանաւորման մէջ եթէ չի գտնուի կանոնագրին 210 երրորդ յօդուածին համեմատ արժան եղածն ի գործ պիտի դրուի: Գօմիթէ Մանկավարժեան գործոց

Կայսերական զօրաց համար պէտք եղած 1.000.000 հօթայ ածուին եւ 80.000 չէքի փայտը դնահատութեան գրուելով ածուին հարիւր օրան 31 զուրուշի եւ փայտին ամէն մէկ չէքին 15 զուրուշի տալու յանձնառու վաճառական գտնուեցաւ: Այս գինէն աւելի աժան գնով տալու յանձնառու եղող վաճառականը կը հրաւիրուի ի Տարի Շուրա յառաջիկայ հինգշաբթի օրը Ապրիլ 2ին ժամը 6ին ըստ Տաճկաց: 26 Մարտ 1870  
Ի Դուռն Սպարապետի

Շոքարայի մէջ գտնուած կայսերական զօրաց համար պէտք եղած Սէլանիկի երկրորդ եւ Կ. Պօլսոյ երրորդ Նումբրո 1.000.000 հօթայ ալիւրը դնահատութեան գրուելով 85 փարայի տալու յանձնառու վաճառական գտնուեցաւ: Վերջին գնահատութիւնը պիտի

Կատարուի հինգշաբթի օրը Ապրիլ 2 ժամը 6ին ըստ տաճկաց: 28 մարտ 1870  
Ի Դուռն Սպարապետի  
Յառաջիկայ շաբաթ օրը 4 Ապրիլ, վերջին գնահատութեան պիտի դրուուի Բումբէի կամ Տանուպի 12.000 քիլէ կակուղ ցորեն, որ արդէն 24 72 35 փարայի առաջարկած է, նմանապէս 40.000 քիլէ Խամպիկի կամ Թայզանի ցորեն: 31 մարտ 1870  
Ի Դուռն Սպարապետի

Շաբաթ օրը 4/16 Ապրիլ, գնահատութեան պիտի դրուին հետեւեալ ապրանքները ի Տարի Շուրա. այսինքն.  
28.800 հատ Գաթմանի չուան  
5 գրկաչափ երկայնութեամբ  
1.800 հատ Գաթմանի չուան  
4 գրկաչափ երկայնութեամբ  
700 հատ Խոլիկի չուան  
1.500 հատ Եւրպայի չուան  
1.500 հատ ձիւ տապրակի կապ  
200 ծրար բարակ չուան (գրննայ):  
31 Մարտ 1870  
Ի Դուռն Սպարապետի

Այս լրագիրը շաբաթ երկու անգամ կը հրատարակուի, չորեքշաբթի եւ շաբաթ օրերը: Բաժանորդագրութեան տեղերն են Կ. Պօլիս Զինկի խանը վերի յարկը թիւ 6 Մասիսի խորագրատունը: Իսկ զաւտաց մէջ հետեւեալ հոգաբարձուաց սենեակները:

ԵԱՄԻՐ. Ստեփան աղա Տէմէան  
ՆԻԿԱՄԻՐԻԱ. Թորոս աղա Օնկերի:  
ԱՍԱԲԱՅԱՐ. Բարութիւն աղա Նազարէթեան  
ՏՐԱՊԵՏՈՐ. Խաչատուր աղա Էմանան  
ԿԱՐԻՆ. Կարապետ պատուելի Զաքարեան  
ՍԵԲԱՍՏԻԱ. Վարդան Լ. Ֆէրի Արդարեան  
ԵԱԵ Մ. աղա Խաչիկեան  
ՀԱԼԵՊ. Նիկողայոս աղա Տէր Մարգարեան  
ԵՐԶՆԵԱՅ. Ընկերայնաց Թանգարան  
ՎԱՆ. Գրիգոր աղա Խոստանեան

Ուրիշ քաղաքներէ ստորագրուի ու գոյններն այս տեղերէն մէկուն հետ կրնան թղթակցել:

Խմբագիր-ՏԵՐԵՆ  
Կ. Ս. ԻԹԵՐԻԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ  
Կ. ՊՕԼԻՍ ԶԵՊԵՐԱՆ

Ա. Ռ. Ե. Ի. Տ. Ր. Ա. Կ. Ա. Ն.

ԸՆԹԱՅՔ ՓՈԽԱՆԱՌՈՒԹԵԱՆ  
1 ԱՊՐԻԼ  
(ՍՍՄԱՆԵԱՆ ԼԻՐԱՅԻ ՀԵՏ 100 ԼՈՒՐՈՒՇԷՆ)  
Լուարա 3 ամիս դուրուշ 110 — 110/4  
Մարտիկա » ֆրանք 22,90 — 22,85  
ԸՆԹԱՅՔ ԳՐԱՄՈՑ  
1 ԱՊՐԻԼ  
Անգղ. լիւրա դուրուշ 109 .25/40  
Նաբուէն ոսկի » 87,11/40  
Խմբէրիկ ոսկի » 89,10/40  
Քրքուր » 51,15/40  
Հինգ ֆրանք » —  
Հինգից » 104/4  
Պրինձ » 108

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 1 ԱՊՐԻԼ  
Ա. Ր. Մ. Տ. Ի. Ք.  
Յորին կարծր Պէտրապիա 31/4 — 33  
» » Աղաղ 31/4 — 33  
» » Պալլէք 30 — 31  
» » Պալլէք 30 — 31  
» » Թէքիտաղ 30 — 31  
Կակուղ Աղաղ 30 — 31  
» » Պէտրապիա 30 — 31  
Կիրքա Թուռա 30 — 31  
Յորին կակուղ Պալլէք 27 — 28

|                   |       |
|-------------------|-------|
| » » Վառնա         | 27—28 |
| » » Պալլէք        | 27—28 |
| Եղիպտացորեն Թուռա | 44 —  |
| » Անասուր         | 43—   |
| Դարի Թուռա        | 43—   |
| » Անասուր         | 43—   |

ՆԵՐՔԻՆ ԲԵՐՔ  
Ի Ո Ջ Ա Կ Ջ Ո Ր  
Պուրա զուրուշ )  
Անասուր » )  
Քրքուր ( ապրանք չկայ )  
Թուրիկ » )  
Մակա » )  
Բ. Ա. Մ. Պ. Ա. Կ զուրուշ )  
Կիրքէ հօթա 44 —  
Իւրք » 44/4 —  
Աղաղ » 40/4 —  
Պարսկաստան » 9/4 —  
Վրաստան » 40 —

|                     |        |
|---------------------|--------|
| Բ Ո Ր Ի Դ           | հօթա   |
| Անասուր Լուարուած   | 41/4 — |
| » Հուարուած »       | 7 —    |
| Բումբէ Լուարուած »  | 42/4 — |
| » Հուարուած »       | 7/4 —  |
| Վրաստան Լուարուած » | —      |
| » Կէս Լուարուած »   | 45 —   |
| » Հուարուած »       | 22 —   |
| Տոպրոն »            | 8 —    |
| Էսկի Շէնր »         | 6/4 —  |

Մ Ա Ջ Ը  
Պարսկաստան հօթա 41/4 —  
Անասուր » 41 —  
ձեռնակ » 6/4 —

ձ Ե Թ Ի  
Դասերի Ա. տեսակ հօթա 45/4 — 46  
» Բ. » » 45 —  
Լեկիւրի » » 45/4 —  
Թոգաթ » » 42 — 43  
Աքէլ » » 42 — 43  
Եղիպտ » » 42 — 43  
Զորու » » 42 — 43

Թ Ի Ֆ Թ Ի Բ  
Լեկիւրի » հօթա 48 — 50  
Դասաւապ » » 48 — 50  
Պէրապար » » 48 — 50  
Չէրքէ » » 48 — 50  
Վան » » 25 — 26

Ա Յ Ե Ի Մ Ո Ր Թ  
Ամասի » 7—8/4 կտոր մէկ 0. 1.  
Եղիպտ » » » »  
Սիլի » » » »  
Լէրքու » » » »  
Դայսէր » » » »

Ձ Ե Թ  
Մուսնի » հօթա 7/4 — 8  
Այլա » » 8 —  
Սաքէ » » 49 —  
Միւր » » 8 —

Պրինձ Թոգաթ Երկրին մէջ — 40  
Սալիկ Դասաւապ հօթա 49 — 23  
Աքի » » 440 — 460  
Բիթրէ » » 27 — 29  
Սուսու » » 4/4 —  
Կտաւա Անասուր Բիթրէ —  
» Բումբէ » —  
Մետաքս Պարսի Բէշ » 45 — 33

ԱՐՏԱՔԻՆ ԲԵՐՔ  
Խաչիկ Բիթրէ տեսակ 100 հօթա 720 — 850  
» Բ. » » 670 — 710  
Եւր » » 17 —  
Շուրա փոշի Անգղ. Կիրք. 240 — 244  
» » Դայս » 240 — 243  
» զուրու Դայս » 280 — 290  
Չայ Բումբէ հօթան 23 — 24  
» Բիթրէ Դայս » 50 — 65  
Անգղ (զապ) Կիրք. 800/4 400  
Պրինձ (պիլի) Պրինձ » 415 — 430  
» » Մարա » 450 — 460  
Զինք տալիս 400 հօթա ֆր. 108 — 110  
Երկրի ձոգա » 60 —  
» տալիս » 70 —  
» Բումբէ » 70 —  
» Բումբէ » 88 —  
Բարիկ » 36 — 38  
Բրինձ Խաչիկ 400 ֆր. ֆր. 13/4 —  
Կարաք Եր Բ. Կիրք. 21 — 23  
Խաչիկ » »